Յակոբեան Ալեքսան
ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտ

Աշխարհացոյցեան Փայտակարան նահանգի գաւառների տեղորոշման նոր փորձ

*«Հանդէս ամսօրեայ»-ի 2013 թ. տարեգրքում լոյս տեսաւ է դարի «Աշխարհացոյց»-ի՝ մեր պատրաստած գիտա-քննական բնագիրը[1]։ Դրանից յետոյ փորձում ենք աւարտին հասցնել «Աշխարհացոյցեան Հայաստանի» նոր քարտէզը, որտեղ առաւելագոյնս ճշգրտուելու են նահանգների ու գաւառների սահմանները։ Է դարի հայ անանուն աշխարհագէտի կողմից գաւառների թուարկման բաւական յստակ հերթականութիւնն ընկալելու շնորհիւ մեր խնդիրը լիովին հասանելի է՝ գոնէ նահանգների մեծ մասի համար։ Դա այդպէս է նաեւ անտիկ եւ վաղ միջնադարեան Մեծ Հայք երկրի ամենից արեւելեան նահանգի (աշխարհի)՝ Փայտակարանի համար (կենտրոնը՝ Փայտակարան քաղաք), որը Ստրաբոնը կոչում է Կասպիանէ (*Geogr. XI, 14, 5*), Փաւստոս Բուզանդը (գլ. Դ, ծ; Ե, ժդ), Մովսէս Խորենացին (գլ. Բ, ծգ) եւ այլ հայկական աղբիւրներ՝ նաեւ Կասպք, իսկ նեստորական ասորի մատենագիրները՝ Պայդանգերան[2]։ Ստորեւ տրուած քննութեամբ բազմաթիւ ճշգրտումներ ենք կատարել Փայտակարանի գաւառների տեղորոշման վերաբերեալ պատմական աշխարհագրութեան նախորդ մասնագէտների (Սուրէն Երեմեան[3], Բաբկէն Յարութիւնեան[4], Թաթիկ Յակոբեան[5], Ռոբերտ Հիւսըն[6]) ձեւաւորած հին պատկերացումներում (ինչն արտացոլուած է մեր նոր քարտէզում, որը պատրաստել ենք Ռուբէն Թարումեանի հետ՝ Բ. Յարութիւնեանի սեւ-սպիտակ քարտէզի հիմքի վրայ)։*

---

1 **Անանուն Է դարի**, Աշխարհացոյց, Գիտա-քննական բնագիր **Ա. Յակոբեանի**, – ՀԱ, ՃԻԷ տարի, Վիեննա – Եր., 2013, սն. 35-194:

2 Տե՛ս **J. B. Chabot**, Synodicon Orientale, Paris, 1902, p. 328, 332, n. 3, 345, 366. Առաւել մանրամասն տե՛ս **Ա. Հակոբյան**, Կասպերի եւ Կասպիանա (Կասպք) մարզի տեղադրութեան մասին, – ԼՀԳ, 1983, հմտ 1, էջ 87-99; **A. A. Акопян**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ер., 1987, с. 37-55.

3 **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության...), Եր., 1963, էջ 88:

4 **Բ. Հ. Հարությունյան**, Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս), Եր., 2004, էջ 43; **նոյնի**՝ Փայտակարան, – ՀՍՀ, հտ. 12, Եր., 1986, էջ 301-302. հմմ. նոյն բնագրով, բայց առանց հեղինակի նշման՝ «Փայտակարան» յօդուածը Հայկ. համառօտ հանրագիտարանում (հտ. 4, Եր., 2003, էջ 822-824): Նոյնը նաեւ՝ ՀՀՇՏԲ, հտ. 5, էջ 536-ի քարտէզը:

5 **Թ. Խ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 1968:

6 The Geography of **Ananias of Širak** (Ašxarhacʿoycʿ). The Long and the Short Recensions. Introduction, Translation and Commentary by **R. H. Hewsen**, Wiesbaden, 1992, p. 253-260 (65A); **R. H. Hewsen**, Armenia: A Historical Atlas, Chicago-London, 2001, p. 41, 100.


ՍԱՀՄԱՆՆԵՐ
Մեծ Հայքի թագավորության միևնույն 387թ.
Մեծ Հայքի աշխարհների (նահանգների)
Գավառների
Կասպից ծովի մակերևույթի իջեցման հետևանքով ջրից ազատված տարածքներ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ
ՓԱՅՏԱԿԱՐԱՆ Աշխարհի (նահանգի) կենտրոն
Վարդանակերտ (Վարսան) Քաղաքներ
Քաղաք Այլ բնակավայրեր
Բագավան Բագիններ
Ճանապարհներ
ՓԱՅՏԱԿԱՐԱՆ
25 0 25 50կմ
Գախտարա
Ալբանա
Կուրի գետաբերան
Սալիան
Վարդանակերտ (Վարսան)
Բաղան
Հանի
Բազավան
Պիժան
Սպանդարան-Պերոժ
Ռոմիզդ-Ե-Պերոժ
Ամբոտիկ
Ալաբանդ լ.
Գարարու-Բագիներ
Խոդափիր
Նակորզան
Քաղաբերդ
Քեռկեսար լ.
Էրմենեան
Կեւանի
Կուր գ.
Նբասխ գ.
Ալբանաս (Ղորանխ) գ.
Կամբիսէն գ.
Փիսար գ.
ՄԵԾԱՄՈՐԻ ՄԱՀԱՆԴԱՄ
ՔՈՒԵՍԱՆ
ՎԱՐԴԱՆԱԿԵՐՏ
ՄՈՒՍԱ
ՍՊԱՆԴԱՐԱՆ-ՊԵՐՈԺ
ՌՈՄԻԶԴ-Ե-ՊԵՐՈԺ
ԱԼԵՐԱՆԴ
ՍՊԱՆԴԱՐԱՆ ՊԵՐՈԺ
ՌՈՍ-Ի ԴԻՋՍԱՐ
ՄԱՀԱՆԴԱՄ
ՄԱՍԻՍ
ՄՈՒՍԱ
ՄԱՍԻՍ
ՄԱՍԻՍ
ՄԱՍԻՍ

Տեղին նշենք, որ ինչպէս բաւականին մանրամասն փաստարկել ենք 2013 թ. «Աշխարհացոյց»-ի քննական բնագրի առաջաբանում, մեզ չխմբագրուած-չհամառօտուած տարբերակով միայն մէկ ձեռագրում հասած (Վենետիկի հմր 1245՝ ընդօրինակուած Հայոց ՌԾԳ – 1604 թ., ցաւալիօրէն՝ խիստ անուշադիր գրիչ Ստեփաննոսի կողմից՝ «Աշխարհացոյց Մովսէսի Խորենաց[ւ]ոյ ասացեալ» վերնագրով, թ. 1ա-38բ[1]) մեր աշխարհագրական երկը (նրա շրջանառու՝ «ընդարձակ խմբագրութիւն» անուանումը չի կարող ճիշտ համարուել՝ հէնց նշուած պատճառով) սկզբնապէս շարադրուել է պարզապէս՝ իբրեւ մի յատուկ ծրագրային փաստաթուղթ-տեղեկատու՝ Տիզբոնում 615/616 թ. կայացած[2] (մէկ այլ հաշուարկով՝ 617/618-ին[3]), այսպէս կոչուած, «Պարսից ժողովին» մասնակցող հայկական «պատուիրակութեան» կողմից օգտագործուելու նպատակով[4]։ Այստեղ կարեւոր է նկատել, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը յատուկ նշում է նաեւ, նորօրեայ եզրոյթով ասած՝ «վիճելի» տարածքները («որ ի Հայոց հանեալ են» կամ «ի Հայոց առեալ են» բառերով)՝ Գուգարք նահանգի գաւառները՝ Վիրք-Վարջան աշխարհ-շահրի դէպքում, Արցախի եւ Ուտիքի գաւառները՝ Աղուանքի, եւ Կասպք-Փայտակարան նահանգը՝ Ատրպատական աշխարհ-շահրի դէպքում։ Նկատենք նաեւ, որ «Պարսից ժողովի» հայկական պատուիրակութեան հէնց այս տարածքային «յաւակնութիւնները», ի տարբերութիւն խմբի մնացեալ նպատակադրումների, մնացին Տիզբոնի կենտրոնական իշխանութեան կողմից «չբաւարարուած»։ Այդպէս՝ «Հայոց իշխան»-ը, որի լիազօրութիւնների ճանաչումը շուտով որդեգրուեց Բիւզանդիայի, ապա նաեւ Արաբական խալիփայութեան կողմից, իրաւասութիւններ չստացաւ Գուգարք, Արցախ, Ուտիք եւ Փայտակարան նահանգների նկատմամբ, եւ դա շարունակուեց ընդհուպ մինչեւ Աբբասեանների կողմից «Արմինիայի» իշխանաց իշխանի հաստատութեան սահմանումը Թ դարի առաջին կէսում, որն, ինչպէս գիտենք, բաւականին արագ վերաճեց թագաւորական իշխանութեան. ընդ սմին Բագրատունի արքաները, ովքեր շատ արագ զիջեցին իրենց գերիշխանութիւնը խալիփայական «Արմինիայի» մաս կազմող Բուն Վիրքի եւ Բուն Աղուանքի նկատմամբ, ամենեւին բաց չթողեցին պատեհութիւնը՝ վերը նշուած ծայրամասային նահանգները միասնական հայկական պետութեան կազմում «վերա-

---

1 Հմմ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Բ, Յօրինեց **Հ. Բ. Վ. Սարգիսեան**, Վենետիկ-Ս. Ղազար, 1924, էջ 811-818:

2 Հմմ. **Է. Լ. Դանիէլեան**, Հայ եկեղեցու նկատմամբ Խոսրով Փարուէզի վարած քաղաքականութիւնը, – ՊԲՀ, 1981, հմր 4, էջ 197:

3 Տե՛ս **M. Van Esbroeck**, L'encyclique de Komitas et la réponse de Mar Maroutha (617), – «Oriens Christianus», 85, p. 162-175.

4 Տե՛ս ՀԱ., 2013, սն. 37-42:

միաւորելու» հարցում (որն, ըստ Կարէն Իւզբաշեանի դիպուկ դիտարկման՝ ոչ պատահականօրէն էր վերստացել «Մեծ Հայք» պաշտօնական անուանումը[1]):

Արդ՝ Մեծ Հայքի նկարագրութեան նախաբանում Կասպից ծովի ափին յիշատակուած Փայտակարան նահանգի վերաբերեալ[2] մեր նոր քննութիւնը ցոյց է տալիս, որ «Աշխարհացոյց»-ի՝ ցաւօք, միայն համառօտ խմբագրութեան մէջ պահպանուած հատուածում թուարկուած նրա 12 գաւառներից[3] առաջին հինգը («Հրաքոտ Պերոժ, Վարդանակերտ, Եւթնփորակեան բագինն, Քոեկեան [resp. Քռեկեան[4]], Ռոտ-ի Բաղայ [resp. Ռոտ-ի Քաղայ[5]]») հեղինակը թուարկել է Երասխ գետից հարաւ, արեւելքից՝ իմա՛ Կասպից ծովափից՝ դէպի արեւմուտք:

Նահանգի առաջին գաւառը՝ Հրաքոտ Պերոժը, որը Բաբկէն Յարութիւնեանն իրաւացիօրէն համարում է նահանգի կենտրոն Փայտակարան քաղաքի «քաղաքային տարածք», ընկնում էր Երասխի՝ դէպի Կուր հոսող հունի արեւելակողմում՝ մինչեւ ծովափը՝ Կուրի գետաբերանի (վերջինիս հին հունով, որ մասին՝ ստորեւ) եւ Երասխի՝ ծովին հասնող հունի գետաբերանի միջեւ: 1981 թ. իր հիմնարար յօդուածում[6] Բ. Յարութիւնեանն արդարացիօրէն հերքեց Ս. Երեմեանի եւ նրա բազմաթիւ նախորդների ու յաջորդների տեսակէտը, ըստ որի Փայտակարան քաղաքը համադրւում էր Բայլականի հետ, որն արաբական աղբիւրների հաւաստի տուեալներով՝ կառուցուել էր Զ դ. սկզբներին, Կուրի եւ Երասխի ստորին հոսանքների միջակայքում (այսինքն՝ հարեւան Ուտիք նահանգի Առան-ռոտ գաւառում): Իրօք, «Աշխարհացոյց»-ի մասը կազմող «Մղո-

---

1 Տե՛ս **К. Н. Юзбашян**, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва, 1988, с. 81.

2 Հմմ. «…ինձներորդ աշխարհ՝ Սիւնիք, որ առ Երասխաւ. տասներորդ՝ Արձախ, որ յերի նորա կայ. *մետասաներորդ աշխարհ Փայտակարան՝ քաղաքով, որ առ եզերբն Կասբից, ի մուտս Երա[ս]խայ.* երկոտասաներորդ աշխարհ՝ Ուտէացւոց, որ առ Աղուանիւք եւ Կուր գետով» (**Անանուն Է դարի**, Աշխարհացոյց…, սն. 126): Այս «առ եզերբն Կասբից, ի մուտս Երասխայ» ձշումը պիտի վերագրել ոչ թէ քաղաքին, այլ նահանգին, քանի որ երկի նախավերջին՝ «Վասն գիտութեան Մղոնաչափաց» բաժնում ունենք. «Ի Նախճաւանա[յ] յԱրտեւատ՝ Մ [մղոն]: Անտի ի Վա[ղ]դանակերտ՝ Հ: *Անտի ի Փայտակարան՝ Կ: Անտի ի ծովն Կասբից՝ Կ* [=60 մղոն]» (տե՛ս նոյն տեղում, սն. 192):

3 «ԺԱ.՝ Փայտակարան. յելից կայ Ուտիոյ առ Երասխաւ: *Գաւառս ունի երկոտասան,* զոր այժմ Ատր[ա]պատական ունի. Հրաքոտ Պերոժ, Վարդանակերտ, Եւթնփորակեան բագինն, Քոեկեան [*resp.* Քռեկեան], Ռոտ-ի Բաղայ [*resp.* Ռոտ-ի **Քաղայ**], Բաղանոոտ, Առոս-Պիժան, Հանի, Աթշի Բագաւան, Սպանդարան Պերոժ, Որմզդ-ե Պերոժ [*var.* Որմզդպերոժ], Ալեւան [*var.* Ալաւան]: Լինի ի նմա բամբակ անբաւ, եւ գարի ինքնաբոյս» (տե՛ս նոյն տեղում, սն. 140):

4 Հմմ. հայերէն **Ռ→Ո**:

5 Հմմ. հայերէն **Ք→Բ**:

6 **Բ. Հարութիւնյան**, Փայտակարան քաղաքը եւ նրա տեղադրությունը, – ԼՀԳ, 1981, հմտ 12, էջ 61-76:

նաչափք»-ի վերոբերեալ հատուածը ուղղակի մատնանշում է այդ քաղաքի իրական տեղը Երասխի հին հունի շրջանում, ծովի ուշ ափաշերտից 60 մղոն հեռու[1]: Բ. Յարութիւնեանի դիտարկումից յետոյ («Սալեանի քաղաքի մօտերքում») արդէն Ռ. Հիւսընը Փայտակարանն աւելի ճշգրիտ համադրեց վաղ միջնադարեան Շահրիար քաղաքատեղիի հետ[2] (որը դեռ Հ. Ղ. Ալիշանին յայտնի էր բաւականին տպաւորիչ բերդապարիսպների պահպանուած հատուածներով եւ ապա պեղուել է խորհրդային հնագէտների կողմից 1970-1980-ական թթ.)[3]: Այն գտնւում է Բիլեա-սուվար վերանուանուած Պուշկինօ շրջկենտրոնից 3 կմ արեւմուտք, դէպի Երասխի հին հունի միջնամասը հայող դարաւանդին[4]:

Փայտակարանի երկրորդ գաւառը՝ Վարդանակերտը, բոլոր մասնագէտներն իրաւացիօրէն տեղադրում են Երասխի հարաւային ափերին, վերը նշուած Հրաքոտ Պերոժից արեւմուտք, մինչեւ Երասխի ամենաջրառատ Սիահ-ռուդ աջ վտակը (նաեւ՝ Կարասու, Գառ-ռահ, գուցէ՞ նաեւ Մեղ), որը ճիշտն է, թէպէտ Բ. Յարութիւնեանի վարկածով՝ այն կարող էր անցնել մի փոքր էլ արեւմուտք: Գաւառը համարւում է նաեւ Վարդանակերտ քաղաքի «քաղաքային տարածքը» (դա եւս շատ հաւանական է), որն արաբական աղբիւրներին լաւ յայտնի Վարսանն է եւ ուսումնասիրողների կողմից իրաւացիօրէն համադրւում է Երասխի հարաւային ափին գտնուող Ալթան (Օլթան) բնակավայրի հետ:

*Սակայն արդէն երրորդ գաւառը՝ Եւթնփորակեան բագինը (*var. *Եաւթնփորակեան բագինք), ի տարբերութիւն նախորդ մասնագէտների կարծիքի՝ անհրաժեշտ է տեղադրել Վարդանակերտ գաւառից ոչ թէ հիւսիս-արեւելք, այլ*

---

1 Տե՛ս ՀԱ, 2013, սեռ. 190:

2 **R. H. Hewsen**, Armenia: A Historical Atlas, p. 41, 100.

3 Տե՛ս Археологические открытия 1980 года, Москва, 1981, с. 415-416. Ի դէպ, այդ ճիշտ տեղը նշուած է նաեւ Լ. Յակոբեանի դպրոցական ատլասի (**Լ. Հակոբյան**, Քարտեզագրված պատմություն Հայոց, Խմբ.՝ **Էդ. Դանիէլեան**, Եր., 1994) մի քանի քարտէզներում: Յաւելենք նաեւ այն ուշագրաւ փաստը, որ ըստ համացանցի նիւթերի՝ Շահրիարում նաեւ այսօր շարունակուող հնագիտական պեղումների նիւթը բացարձակապէս վաղմիջնադարեան է՝ առանց դասական անտիկի եւ ուշ միջնադարի:

4 Մեր խնդիրը չենք համարում Փայտակարան քաղաքի, նահանգի ու նրա գաւառների անունների լեզուաբանական քննութիւնը: Այստեղ լոկ նշենք, որ այդ խնդրին անդրադարձել են դեռեւս Հայնրիխ Հիւբշմանը (**Հ. Հիւբշման**, Հին Հայոց տեղւոյ անունները, Թարգմանեց **Հ. Բ. Պիլէզիկեան**, Վիեննա, 1907, էջ 101-106, 231-232, 343, 372, 395, 400, 404), Անահիտ Փերիխանեանը (**Հ. Գ. Периханян**, Этимологические заметки I, – ИФЖ, 1 (96), 1982, с. 55-56) եւ ուրիշներ, իսկ վերջերս առաւել մանրամասն՝ Արթուր Համբարձումեանը (**Հ. Амбарцумян**, Область Пайтакаран и гора Сабалан. Филологические и этимологические очерки (этимология названий и происхождение традиций), – Международная конференция по арменоведению «Письменные памятники армянского наследия», Сб. докладов и тезисов, Ред.-составитель **Դ. С. Мкртчян**, СПб., 2017, с. 21-40).

հարաւ-արեւմուտք։ Այստեղ՝ Սիահ-ռուդի աջ (արեւելեան) վտակ Սեմբուրի (կոչուած նաեւ՝ Սամբուր, Ռուդ-ե Հաֆնամ) աւազանում ԺԹ-ի դարերում գոյութիւն ունէր Յաֆթ անունով մահալը (գաւառակ)[1], իսկ այդ անունը իրանական լեզուներում նշանակում է հէնց «եօթ»։

*Փայտակարանի չորրորդ գաւառը՝ *Քռեկեանը (վերականգնուած՝ ձեռագրերի լոկ մի խմբի պահպանած՝ Քռեկեան-ից), անհրաժեշտ է թւում տեղադրել Սիահ-ռուդ գետի ձախ (արմ.) ափերին եւ Երասխի ոչ մեծ վտակներ Սելինի ու Լեկանի հովիտներում։ Բանն այն է, որ Սելինի վերնահովտում կայ Քեռկեսեր անունով լեռը (լանջին՝ նոյնանուն գիւղատեղիով), որի 1897 մ բարձրութեամբ գագաթը վեհօրէն յառնում է Երասխի հովտի ցածրիկ բլրաշարերի վերեւում։ Իսկ այդ լեռնանունը՝ վերականգնուած Քռեկ-սար տարբերակով՝ կարելի է համարել հէնց Քռեկ-եան գաւառանուան հետ ուղիղ կապ ունեցող։*

Վերջապէս՝ հինգերորդ գաւառանունը՝ Ռոտ-ի Քաղայ (վերականգնուած՝ ձեռագրերում վկայուած Ռոտ-ի Բաղայ-ից), աւելի ճիշտ է թւում տեղադրել նահանգի ամենաարեւմտեան հատուածում՝ ընդ որում ուղղակի կապ դիտարկելով նրա անուան Քաղայ բաղադրիչի եւ Երասխի հովտի այդ կտորի ամենից մեծ վտակի Քալայբեր անուան միջեւ (նոյն անունով են կոչւում նաեւ գետափնեայ ոչ մեծ քաղաքը եւ ներկայիս Արեւելեան Ատրպատական նահանգի շրջակայ գաւառակը։ Ռոտ-ի Քաղայի տարածքը դէպի արեւմուտք կարելի է հասցնել մինչեւ Քալայբերին զուգահեռ հոսող Իլգենէ, Գանզե-ռուդ, Թիթին եւ Փինար մանր վտակների հովիտները (ամենաարեւմտեան Փինարը Երասխի մէջ է թափւում գրեթէ Սինիքի Արեւիք գաւառի հարաւ-արեւելեան սահմանակէտի դիմաց), ապա նաեւ նկատել, որ հէնց այս հինգ գետակների անտառապատ ձորակներում էին ընկած ուշ միջնադարից մինչեւ Ի դար լաւ յայտնի՝ Ղարադաղ գաւառի 29 հայկական գիւղերը՝ հինգ փոքր մահալներում (գաւառակներում)՝ Քեյվան, Մինջիվան (Մնջեւան), Հասանով, Մեշափարա եւ Դիզմար (Տզմար) անուններով[2]։ Յաւելենք, որ Տաթեւի վանքի 1692 թ. պտղացուցակում այստեղ «Ղարատաղու գաւառն» էր, ուր յիշուած են 44 հայկական գիւղեր[3]։

---

1 Տե՛ս, օր.՝ Բ. Յարութիւնեանի քարտէզներում՝ «Հայաստանը եւ հարեւան երկրները 1878-1914 թթ.» (Եր., 1980); «Արեւելեան Հայաստանը XX դ. սկզբին (1901-1914 թթ.)» («ՀՀ Ազգային ատլաս», հտ. Բ, Եր., 2008, էջ 82)։

2 Մանրամասն տե՛ս, օր.՝ **Ե. Ֆրանգեան**, Ատրպատական (պատկերազարդ ժողովածոյ), Թիֆլիս, 1905, էջ 97-105; **Հ. Հովսեփյան**, Ղարադաղի հայերը. ազգագրական եւ բանահյուսական ժառանգություն, Եր., 2009։

3 Տե՛ս Ձեռ. ՄՄ 6271, թ. 340բ; Ժամանակագրութիւն **Ստեփաննոսի Օրբէլեանի**, Հրատ. պատրաստեց... **Աշ. Աբրահամյանը**, Եր., 1942 (Յաւելուած), էջ 42-43։

Տեղին նշենք նաեւ, որ սահմանային Փինար գետակից արեւմուտք ընկած պիտի համարել ոչ թէ Վասպուրական նահանգը (ինչպէս ներկայացուել է նախկինում), այլ Սասանեան տէրութեան Ատրպատական շահր-աշխարհի՝ Երասխի ափեր հասնող մի կտորը (ըստ Կորիւնի, «Աշխարհացոյց»-ի, Ստեփաննոս Օրբէլեանի եւ այլ աղբիւրների), իսկ այդ կտորի արեւմտեան սահմանը Մեծ Հայքի հետ անցնում էր 3358 մ բարձրութեամբ Կամֆի *(նաեւ՝ Կիամեքիդաղ) կոչուած լեռան՝ դէպի Երասխ իջնող լանջով (ներկայիս իրանական Ջուլֆա քաղաքից 25 կմ հարաւ-արեւելք): Ընդ որում՝ դա ոչ թէ Վասպուրականի, այլ Պարսկահայք նահանգի Զարեւանդ գաւառի արեւելեան սահմանն էր: Ինչպէս ցոյց ենք տուել այլ առիթներով՝ Պարսկահայք աշխարհը, ըստ «Աշխարհացոյց»-ի բառացի պնդման՝ հասնում էր* Երասխ*-ին («Պարսկահայք՝ յելից Կորճէից, եւ ցաղիտատաբար մտանէ ընդ մէջ Ատրապատ[ա]կանի եւ լերինն Տաւրոսի՝ այնր կողման, որ կոչի Կոհ-ի Նիհորական,* [եւ] *մինչեւ* ցերասխ գետ*»)*[1]*, որը թոյլատրելի չէ շփոթել* Ջարասպ *լեռնազանգուածի լանջերից հոսող եւ Ուրմիա լիճ հարաւից թափուող* Գեղեր – Գետառ *անունով գետակի հետ:*

Այստեղ պէտք է անդրադառնալ նաեւ Ռոտ-ի Քաղայ, Քռեկեան եւ Եւթնփորակեան բագին գաւառների հարաւային սահմանի խնդրին: Մենք ճիշտ ենք համարում Ս. Երեմեանին, ով սահմանագիծը տանում էր Սիահ-ռուդի Քոչեռուդ ձախ վտակի աւազանի հիւսիսային ջրբաժանով՝ Փայտակարանից դուրս թողնելով այն (նոյն գծով են բաժանւում նաեւ նոր ժամանակների իրանական մահալ-գաւառակները): Բ. Յարութիւնեանն այդ աւազանում եւ նրան արեւելքից յարող շրջանում տեղադրում էր Փայտակարանի Պիճան (Պիժան) գաւառը: Սակայն դժուար է իրաւացի համարել վերջինիս առանձնացումը՝ իր ճիշտ տեղում թուարկուած Առոս-Պիժան գաւառանուան երկատման եղանակով: Ի դէպ, երկու հեղինակներն էլ Դռոմֆ Հայոց *լեռնանցք են կոչում Ահար քաղաքից ուղիղ դէպի հիւսիս՝ Քալայբերի հովիտ անցնող Խորոմա-իւրտ լեռնանցքը (բարձրութիւնը՝ 2416 մ): Բայց մեզ աւելի հաւանական է թւում, որ հին մայրուղին եւս այսօրուայ նման անցած լինի մի փոքր արեւելք՝ Քալայբերի հովիտ մտնելով Քոչեռուդի վերնահովտից, 1800 մ բարձրութեամբ այն լեռնանցքով, որի արեւմտեան լանջին գտնուող գիւղի անունն ուշագրաւ է՝* Էրմենիան*:*

Փայտակարանի յաջորդ վեց գաւառները՝ Բաղանռոտ, Առոս-Պիժան, Հանի, Աթշի-Բագաւան, Սպանդարան Պերոժ, Որմզդ-ե Պերոժ (var. Որմզդպերոժ), տեղորոշւում են նահանգի հարաւ-արեւելեան հատուածում, ընդ որում՝ դասա-

---

1 **Անանուն Է դարի**, Աշխարհացոյց, սն. 137: Վերջին հատուածում *եւ* շաղկապի ոչ պարտադիր յաւելումն արել ենք՝ բնագրի իրական իմաստի ընկալելի լինելու համար:

տորուած են հիւսիսից հարաւ ուղղուած երեք զոյգերի շարքերով։ Դրանցից առաջին շարքը (Բաղանռոտ – Առոս-Պիժան), արդէն Բ. Յարութիւնեանի իրաւացի կարծիքով, ընկնում էր Կասպից ծով հոսող Բոլգառու (Բոլգար-չայ) եւ Վիլեաժ (Վիլեաշ-չայ) գետերի վերնահովիտներում։ Այդ գաւառների նոյնանուն կենտրոնները կարող են համադրուել ներկայիս Բոյխան*-լու եւ* Առուս *գիւղերի հետ, որոնցից առաջինը 12 կմ արեւմուտք է ներկայիս Ջալիլաբադ շրջկենտրոնից, երկրորդը՝ 3 կմ հիւսիս-արեւելք ներկայիս Եարդիմլու շրջկենտրոնից։*

Արեւելեան գաւառների երկրորդ զոյգը (Հանի – Աթշի-Բագաւան), նոյնպէս Բ. Յարութիւնեանի արդացարի կարծիքով՝ գրաւել է Կասպից ծով հոսող Ինչա-չայ եւ Կորեար-չայ գետերի վերին եւ Վիլեաժ-չայի միջին հոսանքների հովիտները։ Ընդ որում նրանց կենտրոնների անունները պահպանուել են ներկայիս Հանի*-լու եւ* Բաշիրաւան *(հին՝* Բաջարաւան*) բնակավայրերի անուններում (առաջինը հեռու է Ջալիլաբադից դէպի արեւմուտք 6 կմ, երկրորդը 2 կմ հարաւ-արեւմուտք է ներկայիս Պրիշիբ քաղաքից)։*

Սակայն երրորդ զոյգը՝ Սպանդարան Պերոժ, Որմզդ-ե Պերոժ (var. Որմզդպերոժ), հարկաւոր է տեղորոշել նախորդ զոյգից արեւելք, այլ ոչ թէ հարաւ, ինչպէս որ Բ. Յարութիւնեանի մօտ է, կամ՝ էլ արեւմուտք, ինչպէս որ Ս. Երեմեանի մօտ է։ Դա Կասպից ծովի ափաշերտն է՝ Ինչա-չայի, Կորեար-չայի եւ Վիլեաժ-չայի ստորին հոսանքների հովիտներում։ Դրանք պիտի համարել նոյնանուն քաղաքների «քաղաքային տարածքները», որոնք կառուցուել են Ե դ. երկրորդ կէսին Պերոզ արքայի (459-484 թթ.) հրամանով՝ կրելով հէնց իր անունը, եւ աւելի հիւսիս ընկած Հրաքոտ Պերոժի Փայտակարան քաղաքի հետ միասին միտուած են եղել հիւսիսային քոչուոր ցեղերի դէմ Սասանեան տէրութեան կովկասեան պաշտպանական գծի ամրապնդման ռազմավարական լուրջ խնդրին[1]*։ Երկու քաղաքները պէտք է համադրել խորհրդային շրջանում պեղուած երկու հնավայրերի հետ, առաջինը՝ Սաբիրաբադ գիւղի մօտ՝ Ջալիլաբադից 2 կմ արեւմուտք (նաեւ հմմ. Սպանդարան – Սաբիրաբադ), իսկ երկրորդը՝ Արքեւան գիւղի մօտ (մէկ կմ արեւմուտք ներկայիս Մասալլու շրջկենտրոնից)։*

*Նահանգի վերջին՝ տասներկուերորդ գաւառը՝ Ալեանը (var. Ալաան), հարկ է տեղորոշել Առոս-Պիժանից, Աթշի-Բագաւանից եւ Որմզդ-ե Պերոժից հարաւ՝ Լենքորան գետի (թալիշերէն՝ Լանկոն, քարտէզներում նաեւ՝ Ալաշաչայ, Կոնժաւու-չայ, Ալան-ռոտ) վերին ու միջին հովիտներում։ Այդ գետն իր աջ (հարաւային) Վեժառու (Վեշառու-չայ) վտակով, ըստ ամենայնի, պիտի համարուի Կղաւդիոս Պտղոմէոսի յիշատակած այն Կամբիւսոս գետը (*Καμβύσου πο-

1 Փայտակարան քաղաքը նոյն գործառոյթն ունէր նաեւ Արշակունեաց Հայաստանում։

ταμοῦ ἐκβολαί, *«Աշխարհացոյց»-ը նրանից քաղել է* Կամբիսեաս *ձեւով), որը Կասպից ծովի ափերին բաժանել է Մեդիան եւ Հայաստանը*[1]*: Այդ գետանունն էլ, թերեւս, հնարաւոր է համեմատել* Կոնժատուի *հետ, գուցէ՝ վերականգնելով* *Կոմշ-աբ *(կամ* Կոմշա-*ռու* < *Կոմշա-ռուդ*) *ձեւը, քանի որ իրան. «Կամբիս» նշանակում էր* գոմեշ*: Վեժառուի ստորին հովտի ձախ ափին ցածրադիր ծովափի վերեւում ընդգծուած ձեւով յառնում է* Ալաբանդ *անունով լեռը (695 մ բարձրութեամբ), որը կարող է կապուած լինել գաւառանուան հետ (ըստ այսմ՝ Դ-ո՞վ՝ Ալեւանդ կամ Ալաւանդ՞, ենթադրելով, որ «Աշխարհացոյց»-ի համառօտի խմբագիրը մայր ձեռագրում վերջին տառը վրիպել է): Շեշտենք, որ մենք հաստատապէս սրբագրելի ենք համարում նախկին այն շտապողական մօտեցումը, ըստ որի Փայտակարանի (եւ այդու՝ մեր Ալաւանդ գաւառի) հարաւ-արեւելեան սահմանագիծ կարող էր համարուել աւելի հարաւ ընկած Աստարա գետը. վերջինս շատ աւելի սակաւաջուր է, քան Լենքորանը իր Վեժառու վտակով, թէկուզեւ հէնց Աստարայով է նոր եւ նորագոյն ժամանակներում անցնում Թալիշի խանութեան, ապա Ռուսական կայսրութեան ու ներկայիս Ադրբեջանի հանրապետութեան Թալիշ երկրամասի հարաւային սահմանագիծը:*

Ի դէպ, մեր Ալաւանդ գաւառի արեւմտեան սահմանային ամենայարմար լեռնանցքի տակ մեծամասշտաբ քարտէզներում երեւում է Ամբուր-դերէ *անունով գիւղը (նաեւ՝ Ամբուրդերէ գետակը), որը համադրելի է թւում Ղեւոնդ պատմագրի յիշատակած* Ամպրոտիկ *ամրոցի հետ: Այն Ը դ. կէսերին պաշարել էին խազարները, ովքեր անցնելով Զողը եւ Մասքթաց երկիրը՝ գրաւել էին* Փայտակարանը *եւ նրա 3 գաւառները՝ «Աթշի Բագուանն կոչի, եւ զՍպատար ոմն Փերաւզ եւ զՈրմիզդ Փերաւզ»: Խազարներն Արտաւէտի մօտ էին թողել իրենց ողջ աղխը, որոնց վրայ յանկարծակի արաբական զօրք էր յարձակուել, ուստի նրանք «վաղվաղակի» յետ էին դարձել Ամպրոտիկից: Ճիշտ է, պահպանուած միակ հին ձեռագիրը նշում է, թէ Ամպրոտիկը* Զարեւանդ *գաւառում էր*[2]*,*

---

1 **Ptolemy** Geography, Book 6. Text and English/German Translations by **S. Ziegler**. Wiesbaden, 1998, p 36 (VI, 2, 1).

2 Հմմ. «Եւ միաբանեալք ելանէին ընդ աշխարհն Հոնաց եւ ընդ պահրակն Ճորայ՝ ընդ երկիրն Մասքտաց, ասպատակէին *յաշխարհն Փայտակարան*: Անցանէին ընդ գետն Երասխ՝ յերկիրն Պարսից, աւերէին զԱրտաւէտ եւ զԳանձակն Շահաստան *եւ զգաւառն, որ Աթշի Բագուանն կոչի, եւ զՍպատար ոմն Փերաւզ եւ զՈրմիզդ Փերաւզ*: Եւ ի դիմի հարան զաւրքն Իսմայելի, եւ Ջառա[ղ] ոմն անուն զաւրավար նոցա: Կոտորէին զամենեսին ի սուր սուսերի եւ ինքեանք *ասպատակէին ի գաւառն Զարեւանդ* եւ պաշարէին զամրոցն, որ անուանեալ կոչի *Ամպրոտիկ*, եւ զաղխ բանակին եւ զգերեալսն ի սրոյն *թողուին մերձ ի քաղաքն Արտաւէտ*: Եւ մինչդեռ մարտընչէին ընդ ամրոցն *Ամպրոտիկ*, յանկարծակի գունդ մի ի զաւրացն Իսմա[ղ]ելի եւ զաւրավար նոցին, եւ ա-

բայց Պարսկահայք նահանգի Զարեւանդ գաւառը Արտաւէտից հեռու էր առնուազն 260 կմ, ուստի նրա փոխարէն, գուցէ, վերականգնելի է **զԱլեւանդ** *(հայցական հոլովաձեւով[1]): Ամբուրդերէն Արտաւէտ-Արդեբիլից հեռու է լոկ 30 կմ:*

Վերջում կարելի է անդրադառնալ նաեւ «Գաբառու բագինք» վայրին եւ Կուրի հին ստորին հունի խնդրին: Նկարագրելով Վրկանից (Կասպից) ծովի ափերը, էապէս օգտուելով Պտղոմէոսից (ում գրչագրերում տեղանունը «Σαβαῖοι [մէկ ձեռ.՝ Γαβαῖοι] βωμοί» ձեւով է)[2], բայց նաեւ որոշ նոր տուեալներ հաղորդելով՝ «Աշխարհացոյց»-ը մասնաւորապէս գրում է. «Իսկ ըստ հարաւո[յ] սահմանի Մեդաց աշխարհաւն, որ են Մարք, առեալ ի նոյն Քռի[ն]դաս գետոյ, եւ յարեւմուտս կոյս՝ ազգաւն Անար[ի]ական Մարք, եւ մուտք գետոյն, որ կոչի Ստռառովտ, յորում Դէրպիկէս գաւառ, զոր կարծեմ Դիլումս, եւ Գեղաւք, յորում մուտք գետոյն, որ ասի Ոմդաս, մինչեւ ցմուտս գետոյն, որ ասի Կոռդոս, եւ Կադշաւք, յորում Գաբառու Բաւգինք, մինչեւ ի մուտս գետոյն, որ կոչի Կամբիսեւս»[3]: Այս բնագրից պարզ է, որ «կատիշների» երկրում գտնուող «Գաբառու բագինք» վայրը հարկ է փնտրել մի փոքր հարաւ Մեծ Հայքի եւ Մարաստանի սահմանաբաժան «Կամբիսեւս» գետից, որն, ինչպէս տեսանք, համադրելի է Լենքորան գետի եւ նրա Վեժառու վտակի հետ: Չնայած դրան՝ Ս. Երեմեանն այդ վայրն անհասկանալիօրէն տեղորոշել է Երասխի հարաւային ափին մօտ՝ նրա հետ կապելով նաեւ Եւթնփորակեան բագինքը[4] (որը նա առանձին գաւառ չէր համարում, այլ՝ Վարդանակերտի մաս), ինչին շտապողաբար հետեւել

նուն զաւրավարին նոցա՝ Սեթ Հարաշի, անկանէր ի վերայ բանակի նոցա սակաւ ա-րամբք, եւ զբազումս հարեալ սատակէր ի սուր սուսերի իւրոյ *եւ թափէր զգերեալսն* ի սրոյ նոցա: *Վաղվաղակի հասանէր* գոյժ աղմկին առ զաւրսն, որ *պահէին զամրոցն Ամպրոտիկ*, եւ իբրեւ լուան զչարիսն, որ հասին ի վերայ նոցա, *թողին* զբերդն, զոր պաշարեալ էր, եւ *հասին* ի վերա[յ] հինին, որ եկեալ էր ի վերա[յ] բանակի նոցա» (**Łewond Vardapet**, Discours Historique. Traduit et commentée par **Bernadette Martin-Hisard**. Avec en annexe: La correspondence d'Omar et de Léon. Traduit et commentée par **Jean-Pierre Mahé**. Texte arménien établi par **Alexan Hakobian**. Paris, ACHCByz, 2015 (Պատմաբանութիւն **Ղեւոնդեա[յ] մեծի վարդապետի Հայոց**, որ յաղագս երեւելոյն Մահմետի… Ֆրանսերէն թարգմանութիւնը … **Բերնադետ Մարտէն-Հիզարի** … եւ … **Ժան-Պիեռ Մահէի**, … Հայերէն բնագիրը՝ **Ալ. Յակոբեանի**), գլ. ԻԲ, էջ 401):

1 Թէպէտ՝ այստեղ «**զ**Ալեւանդ» պարզ վերականգնումը կը հակասէր գրաբարի կանոններին, ուստի բնօրինակում չէր կարող լինել «ապատակէին **ի** գաւառն **զ**Ալեւանդ» (*Ի* նախդիրի դէպքում *Զ* նախդիր չի դրւում), այլ լոկ՝ «Ալեւանդ»: Այն հետագայի ինչ-որ գրիչ է շփոթել *Զարեւանդ* գաւառանուան հետ եւ «վերականգնել» սրա սկզբնատառը:

2 **Ptolemy** Geography, Book 6, p 36 (VI, 2, 1).

3 **Անանուն Է դարի**, Աշխարհացոյց, սն. 72-73:

4 **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 46, 51: Նոյնն է՝ **Ս. Գ. Պետրոսյան**, Փայտակարանը եւ Պարսպատունիքը մ. թ. I դարի երրորդ քառորդում, – ՊԲՀ, 1975, հմտ 2, էջ 178:

է նաեւ Բ. Յարութիւնեանը, ով Եւթնփորակեան բագինքը առանձին գաւառ էր համարում (այդպէս գաւառների թիւը հասցնելով 13-ի, քանի որ առանձին էր համարում նաեւ Առոսը եւ Պիժանը)։ Այնինչ, ուշադիր դիտարկելով 100 կամ 200 հազարանոց մեծամասշտաբ զինուորական քարտէզները (արդէն՝ ազատ տեղադրուած համացանցում)՝ կարելի է նկատել, օր.՝ Բիջարաբին *անունով իրանական մի բնակավայր (Աստարա գետից փոքր-ինչ հարաւ, Ղալեշայ՝ ուշագրաւ անունով գետակի ափին), որը հնարաւոր է մեծ հաւանականութեամբ համադրել* Գաբառու բագին *տեղանուան հետ՝ նրա տակ, գուցէ եւ, ենթադրելով դրափոխուած նախնական* *Բագառու-բ[ագ]ին *անուանաձեւը։*

Իսկ հարեւան Ալբանիա երկրի պտղոմէոսեան բաւականին մանրամասն նկարագրութեան[1] ուշադիր քննութիւնից (համադրուած՝ երկրաբանական նիւթի հետ[2]), մեր կարծիքով, երեւում է, որ իր ստորին հոսանքում Կուրի հին հունն ընթացել է ներկայիս հունից մի փոքր հարաւ՝ սկսած Զարդոբ քաղաքի շրջանից։ Այն, ըստ ամենայնի՝ անցել է ներկայիս Սարիսու կոչուող ճահճալճերի միջով, իսկ Երասխի նոր՝ հիւսիսային գետաբերանի ջրերն ընդունելուց յետոյ դէպի ծով է հոսել ներկայիս Շահումեանի անուան ջրահաւաքով (կոլեկտոր), որը մեծամասշտաբ զինուորական քարտէզներում կոչւում է նաեւ Կուբա։ *Իսկ Զարդոբի մօտ Կուրի ներկայիս հունով են հոսել Տուրեան մեծ վտակի ջրերը, որը Պտղոմէոսի երկում կոչուած է* Ալբանոս, *Ստրաբոնի «Աշխարհագրութեան» մէջ՝* Լոբանէս *(վերականգնուած՝* ձեռագրական Սանդոբանէս *ընթերցումից* < *Սանի *եւ* *Լոբանէս*), իսկ մեր «Աշխարհացոյց»-ում՝* Սերոջ[3]*։*

---

1 **Ptolemaei Claudii** Geographia. Ed. **C. Müller**. Parisiis, 1901 (V, 11, 1-7); **Klaudios Ptolemaios**. Handbuch der Geographie, Griechisch – Deutsch, Herausgegeben von **A. Stückelberger und G. Grasshoff**. Basel, 2006; **В. В. Латышев**, Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, Т. I, Греческие писатели, Вып. I-II, СПб., 1893, с. 240-247.

2 Կասպից ծովի ափերի եւ ափագծի տատանումների (տրանսգրեսիայի) մասին ամփոփ եւ գրականութեան լայն ընդգրկումով տե՛ս Колебания увлажненности Арало-Каспийского региона в голоцене, Сб. статей, Отв. ред. **Б. В. Андрианов** и др., Москва, 1980; **С. Н. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании и уровень Каспия (Постановка вопроса. Системный анализ карты, предварительная локализация рек и поселений, стратегия дальнейших поисков), – ВДИ, 1983, № 1, с. 117-147; **он же**: Проблема Аракса–Танаиса–Яксарта и уровень Каспия в VI-III вв. до н. э. (К вопросу о палеогидрографии Каспийско-Аральского бассейна), – Mathesis. Из истории античной науки и философии, Москва, 1991, с. 115-175 (+XII).

3 Մանրամասն տե՛ս **Ա. Յակոբեան**, Բուն Աղուանքի քաղաքները եւ գետերը ըստ Կլաւդիոս Պտղոմէոսի եւ Է դարի Աշխարհացոյցի, – «Գարդմանի եւ Շիրվանի հայոյթյան պատմա-մշակութային ավանդները (պատմություն եւ արդիականություն)», Հանրապետական գիտաժողովի նիւթեր, Եր., 2016, էջ 136-141։